

4611

Հայրիկի Ա.

281 69

Խ-912

Թիֆլիս

1893

28164

Խ-912

№ 10

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐԱՊԱՐԱՆ

ՀԱՅՐԻԿԻՆ



45/126

Յ. Յ. ՄԱՐԿԻԱՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ

Յօգուտ Ա. Էջմիածնայ Տաճարի վերանորոգութեան

2010

5

№ 10

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ

92
Խ-977

48

Հ Ա Յ Ր Ի Կ Ի Ն

Տ. Տ. ՄԿՐՏԻԶ Ա.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

(
1005
21395
)

ԳԻՆՆ Է 10 ԿՈՊԵԿ

Յօդուտ Ա. Էջմիածնայ Տաճարի վերանորոգութեան



ԹԻՖԼԻՉ

Արագատիպ տպարան Մ. Մարտիրոսյանի եւ Ընկ.

ՄԻԲԱՏԵԼԵՆ ՓՈՂ. ՏՈՒՆ № 81

38638 ակ

47

Дозволено цензурою, Тифлисъ 31-го іюля 1893 года.

21860-60



Տ. Տ. ԲԻՐՅԱՆ Ե.

ԿԱԹՈՒԴՈՍ ԱՍԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ահա եկաւ Հայրիկը, մեր անգին, բոլորիս պաշտելի
Հայրապետը. եկէր նրա առաջը ամենադ: Հայրիկը այն հոգե-
տրականներից չէ, որ ասի, թէ սա իմ որդին չէ, նա իմս
է: Հայրիկն ամենքինն է, եւ մենք բոլորս էլ նրան ենք: Ազատ
մօտ եկէր մեր մեծ Հօրը. համբուրեցէր նրա սուրբ աջը.

№ 20 1

պատմեցէք նրան ձեր վշտերը. քաց արէք ձեր լեզուները եւ յայտնեցէք ձեր դրութիւնը: Նա ձեզ համար կաղօթի, որ քարոյական հիւանդութիւնից ազատուէք. նա կօգնի ձեզ, եթէ նիւթապէս գրկուած էք: Եթէ մաքուր սրտով մօտենանք Հայրիկին, նա կազատի մեզ ամեն տեսակ վշտերից եւ փորձանքներից: Դուք Հայրիկի հեռուոր որդիներ, որ գրկուած էք հեռուորութեան պատճառաւ Հայրիկի սուրբ երեսը տեսնելուց, նրա ձայնը լսելուց, մի յուսահատուէք, նա ինքը ամենքին կ'տեսնի. ամենքի ցաւերին հնար եւ դարման կ'մատակարարի: Հայրիկին Աստուած ուղարկեց մեզ, որ նա մեզ հանի մեր յուսահատ դրութիւնից, որ մեր խարխուլ ու քայքայուած սրբապայրերը վերանորոգուին, որ նա ընկած հոգեւորականութիւնը իւր աստիճանին վայել քարծրութեան. հասցնի եւ մեր քոլոր յոյսերը մարմնացնի: Ով որ արժանանայ նրա սուրբ երեսը տեսնելու, նա իրաւ կ'համոզուի եւ կհաւատայ, որ Հայրիկը Աստուծուց ուղարկուած է մեզ: Շտապենք. գնանք շրջապատներ քոլորիս սիրելի Հայրապետին, մեր պաշտելի Հայրիկին: Հնազանդուներ նրան եւ սուրբ համարենք ամեն մի նրա հրամանն ու տնօրինութիւնը: Տիկնայք ու օրինորդներ հանեցէք ձեր վրայի զարդարանքները, ոսկի, արծաթ, աղամանդ եւ զոհարներ. տուեցէք Հայրիկին. ստիպեցէք ձեր սրտակիցներին, ամուսիններին, հայրերին, եղբայրներին, հեռու եւ մօտիկ ազգականներին, որ նրանք էլ առատութեամբ քաց անեն իրանց քսակները: Այո՛, եթէ անկեղծ սրտով եւ մեծազումար դրամով մօտենանք Հայրիկին, նա այդ դրամներով ամենայն քան կանի եւ կտեսնենք, որ ամենակարճ ժամանակում կ'վերանորոգուին Ս. Էջմիածնի քայքայուած կամարները, հնացած վեհարանը, քանդած վանքերը. կ'ընդարձակուին մեր քոլոր ուսումնարանների պատերը, կ'քարծրանայ հոգեւոր դասի քարոյական մակերեսը, եւ միայն այն ժամանակ հայ ազգը կհասնի

ցանկալի վիճակին: Եւ այսպիսի անկեղծ սրտով Հայրիկին մերձենալով ու գործ սկսելով կերպարծուին մեր վաղեմի փայփայած յոյսերը: Հիմա հանգստանանք եւ սպասենք, համոզուած լինելով. որ ունինք մեծ Հայր-Հայրիկ-Տէր.....

Ք. Միրիմանեան.

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

ԴԱՐՈՒՂԱԿԱՆ ԱՄԵՆԱՅԵ ՀԱՅՈՑ *)

Որ հայր այսօր չի ճանաչում Խրիմեան Հայրիկին և ով չի երգում նրա անունով. սակայն անշուշտ շատ քչերին է յայտնի այն դժուար ու փշոտ ճանապարհը, որով հասել է նա այդ հռչակին և փառքին, ուստի աշխատենք առաջ բերել նրա կեանքի ընթացքում երկցած նշանաւոր դէպքերն ու երևոյթները, որոնց դէմ կռուել է Խրիմեանը և որոնցով

*) Ահհնաբին է սեղմել Հայրիկին նեղ շրջանակի մէջ: Դժուար է և շատ դժուար ամփոփել մի քանի երեսների մէջ այն անդուգական հոգեւորականի պատկերն ու կենսագրութիւնը, որի կեանքը ամբողջ յիսուն տարի մարմնացեալ եռանդ է, գործ և կռիւ: Սակայն դժբաղդաբար «ժողովրդական գրադարանի» նպատակն ու ծրագիրը թոյլ չեն տալիս աւելի ընդարձակն անելու, և աւելի բազմակողմանի նկարագրելու, ուստի ժողովրդին մատչելի անելու համար, ծաղկաքաղ ենք արել նրա սիրելի Հայրիկի կեանքի խոշոր ու նշանաւոր դէպքերը պարզ լեզուով, ցոյց տալու համառօտակի, թէ ով է այն հոգեւոր անձը՝ Հայրիկը, որին նա կէս դար պաշտում է:

Գրքոյկիցս եկած արդիւնքը յատկացրել եմ Ս. Էջմիածնայ տաճարի վերանորոգութեանը. իսկ ստացած արդիւնքի մասին իւր ժամանակին հաշիւ կտամ տեղական լրագրներում:

Հրատարակիչ

անց է կացրել իրան կեանքի ամբողջ ընթացքը մինչև կաթուղիկոսական զահին հասնելը:

Երկնքի աստղերի համբարքն իմացող և անսահման տիեզերքի հիւլէները քննող երեւիլի մի գիտնական չէ Խրիմեանը. նա հոգեւորական է, մի պարզ, բայց անձնուրաց հոգեւորական, ինչպէս որ այդ պահանջում է Քրիստոսի Աւետարանը. իրեն անձը իւր հօտի վերայ գնող քաջ հովիւ է նա: Խրիմեանը ծնել է ժողովրդի հասարակ դասակարգից և սկսած իւր ծընընդեան օրերից մինչև հայրապետական աթոռը բազմելը՝ նա ապրել է այդ ժողովրդի մէջ, սիրել է նրան և սիրուել է նրանից, որովհետև միշտ արհամարհելով փափուկ և հանգիստ կեանքը, ուսումնասիրել է ժողովրդի ցաւերը առանց յոգնելու, այդ նոր մեծ ներսխը դարմանել է, առողջացրել իրեն սիրելի հայ ժողովրդի այդ ցաւերը և էլի միշտ զժգոհ իրեն արածից, առանց յուսահատուելու աւելին է ցանկացել: Խրիմեանը այն անձնաւորութիւնն է, որը իրեն ծնող հայրենիքի համար առ ոչինչ է համարել անձնական ամենայն բան և առանց պարծենալու միշտ կրկնել է, որ իրեն անձն անգամ հայրենիքի սիրուն զոհելը իւր ամենամեծ պարտականութիւնն է, և ամեն մի հայի սիրել է ոչ «որպէս զանձն իւր», այլ իւր անձից աւելի: Այս է պատճառը, որ նա այսօր այն միակ ժողովրդական հոգեւորականն է, որին սկսած իւր հայրենիքից մինչև ամենահեռաւոր երկրներում ցրուած հայերն էլ ՀԱՅՐԻԿ են անուանում, մի անուն, որով ժողովուրդը արտայայտում է իւր անկեղծ սէրը և երախտիքը դէպի այդ մեծ մարդը: Չենք կարող աւելի լաւ և ամբողջովին նկարագրել Հայրիկի անձնաւորութիւնը այնպէս, ինչպէս որ այդ արել է մի ականաւոր և պատկառելի հոգեւորական* զեռ սրանից 30 տարի առաջ գրելով «Կռունկ» ամսագրի էջերում. «... Ո՛վ է այդ վարդապետն, որ այս ժա-

*) Ամենապատիւ Մեղիսեղեկ Մուրադեան եպիսկոպոսն է դա, որը այն ժամանակ զեռ աշխարհական էր Գարեգին անունով և աշխատակցում էր «Կռունկ» ամսագրին:

մանակումն քաջ ծանաչում է իրան մեծ կոչումն, վարվում է իրան կոչման համաձայն, և փառասիրութեան, անձնապաշտութեան, ծուլութեան և մեղկութեան կուռքերն ոտքի տակ փշրելով, և միայն ազգի բարոյական վերածնութեանն փափաղելով, համարձակ լսելի է անում իր ձայնը. ...դա «Հրաւիրակ Արարատեան» և «Հրաւիրակ Աւետեաց Երկրին» գորովաշարժ հեղինակութիւնների հոգեծանօթ հեղինակն է, Մկրտիչ վարդապետ Խրիմեան, ազգի կարօտութեան և բաղձախիթ յարմար վարդապետ, որ մի ձեռքին ունի ազգային կեանքի պատմութիւնը, իսկ միւսում Ս. Գիրքը:

Ինչքան կրթական, սրբան խրատական է Հայրիկի կենդանի և օգտակար կեանքը ամեն մի անկեղծ հայի համար, որ սիրում է հայութիւնը և մանաւանդ ամեն մի հայ հոգեւորականի համար, որը քահանայութեան վերաբերու է հազել, ոչ թէ իրեն, այլ իւր հօտին ծառայելու. Հայրիկի կեանքը պարզ ապացոյց է թէ Երօնի կարող է նա անել և ի՞նչ բարձրութեան կարող է հասնել, եթէ մէջը հաստատ կամք և ազնիւ ցանկութիւններ լինին և եթէ այն հաւատով գործի, ինչ հաւատով որ գործել է Հայրիկը իրեն ամեն մի պաշտօնում ու ասպարիզում:

Մանուկ Մկրտիչը (Հայրիկի մկրտութեան անունն է), որը մեծանալով պէտք է ամբողջ ազգի հոգատար հայրը դառնար, ծնուել է 1820 թուին Հայաստանի ամենահին և պատմական քաղաքներից մէկում՝ Վանում, այս քաղաքի ամենագեղեցիկ և ամենաառողջարար Այգեհտան (այգիներով հա-

բաւոտ կ'նշանակի) կոչուած թաղում: Այս սիրուն և բանաստեղծական թաղումը՝ գրախտանման պարտէզներում, առուակների ափերին և թռչունների երգերով է կազմակերպուել Հայրիկի պարթև և յաղթանդամ հասակը, նրա գեղեցիկ գէմքը, զթով և սիրով լիքը խաղաղ աչքերը և միշտ ցաւոյ ու զգացուող փափուկ սիրտը. այդ տեղերումն է ձեռք բերել նա այն հսկայական մարմնի ոյժն ու երկաթի առողջութիւնը, որը այսքան երկար տարիների չարչարանքներից և կռիւներից յետոյ էլ, դեռ էլի պահում է ծերութեան 73 ամեայ հասակում, որով զարմացում է ամենքին և շատ երիտասարդների նախանձը չարժում:

Խրիմեանի հայրը Վանում յայտնի վաճառական էր. տեղական մանուածքներն ու գործուածքները տանում էր Ռուսաստան և զլիսաւորապէս Ղրիմու թերակղզին, որի պատճառաւ և դրանց ամբողջ ընտանիքին ասում էին «Ղրիմցոնք», որը ժամանակի ընթացքում փոխուելով դարձել է այսօր Խրիմեան: Փոքրիկ, Մկրտիչը մեզ նման, բարեկարգուած և մանկավարժական ուսումնարաններում չի անցկացրել իւր մանկութիւնը, այլ դաշտերում գառների հետից, այգիներում պարտիպանին օգնելու և իւր երեխայական նախնական կրթութիւնը ստացել է իւր հօրեղբոր ձեռքի տակը, որը յայտնի կտաւագործ էր և ունէր բազմաթիւ աշակերտներ, որոնց թւումն էր և Մկրտիչ Խրիմեանը: Միւս աշակերտների հետ միասին Մկրտիչը սովորում էր կտաւ գործել և գրել-կարդալ. սակայն հօրեղբոր զլիսաւոր նպատակը արհեստը լինելով, շատ մեծ ուշադրութիւն չէր դարձնում աշակերտների ուսման վերայ և չէր էլ կարող այդ անել, քանի որ հէնց ինքը մի երեւի կրթութեան տէր չէր, ուստի և Մկրտիչը ամենամեծ ուսումը, որ կարողացաւ հօրեղբորից առնել, այդ հասարակ գրաճանաչութիւնն էր. բայց մի շատ մեծ բան ստացաւ իրենց ընտանիքից, որը ամբողջ կեանքումը պահեց. այդ իրենց ամբողջ ընտանիքի յայտնի բարի վարքն էր, առաքի-

նութիւնը և գէպի ուրիշները զթոտ ու ողորմած լինելը. իրենց ընտանիքի այդ օրինակելի պատկերը լիովին գրոշմուեց մանուկ Խրիմեանի հոգու վերայ և այլեւ չճնշուեց:

Մկրտիչը արդէն մտել էր պատանեկութեան հասակը և նրա ծարաւի հոգին բաւական չէր ունեցած ուսումով. նա աւելի էր ուզում սովորել և վերջապէս նրանց պատուաւոր ընտանիքի համար ամօթ էր, որ իրենց որդին այդքան քիչ ուսում ունենայ և այն ժամանակի բոլոր կրթութիւնը ձեռք չբերի. իսկ ժամանակի բոլոր կրթութիւնը կենդրոնացած էր վանքերում: Վանի շրջակայքը լիքն է հին վանքերով և վանական միաբաններով, բայց ամենից մօտիկը, որ ընդամենը մի քանի ժամուայ ճամբայ է, դա Վարազայ վանքն է, Խրիմեանի ամենից շատ սիրած սրբավայրը: Պատանին թողեց իրեն առաքինի վարպետին՝ հօրեղբորը և գնաց Վարազ ուսումը կատարելագործելու: Մի քանի տարի անց կացրեց միաբանների մէջ, սիրեց նրանց խաղաղ ու քաշուած կեանքը և այդ օրուանից նա մտադրուեց իրեն նուիրել հոգևորական բարձր կոչմանը: Այստեղ էլ մեծ ուսում չձեռք բերեց պատանի Խրիմեանը, բացի եկեղեցական և մատենագրական գրքերի ընթերցանութիւնից. բայց ձեռք բերեց գրաբար լեզուի հմտութիւն, որը դարձաւ յետոյ նրա համար միակ գէնքը և միջոցը ընթերցանութեան համար. այնուհետեւ միմիայն գրաբար լեզուով ընթերցանութեամբ և ինքնակրթութեամբ այնքան ծանօթութիւն և գիտութեան պաշար ձեռք բերեց, որ եւրոպական մի քանի լեզուներ իմացողներից շատ քչերը միայն կարողացել են: Գրաբար լեզուով ուսումնասիրեց Հայոց պատմութիւնը, Հայոց հին մատենագրութիւնը, Հայ եկեղեցու հոգին, նրա էական գաւառներն ու անշարժ, սրբացած աւանդութիւնները, որոնցով շնչել ու ապրել էր Հայ ժողովուրդը: Սրա հետ իմիասին թարգմանական գրականութեան միջոցով նա ծանօթացաւ և եւրոպական նոր ծաղկած գիտութիւնների հետ, կարելի է ասել որ մինչև անգամ լաւ ուսումնասիրեց այդ

գիտութիւնները մշակած սկզբունքներն ու վարդապետութիւնները. ասածներն կարող են ապացոյց լինել նրա հեղինակած գրքերի բովանդակութիւնները և արծարծած խնդիրները՝ մանաւանդ «Երախտի Ընտանիք» և «Սիրաք ու Սամուէլ» նըշանաւոր գրքերում:

Այսպիսով Հայրիկը դեռ շատ երիտասարդ, շատ լաւ ուսումնասիրեց իրեն սիրած հայ ժողովրդի անցեալ ամբողջ կեանքը, իմացաւ թէ նա ինչով է ապրել և ինչով գլխացել այնքան նեղութիւններին ու փոթորիկներին. բայց նա զգում էր որ դեռ այդ բաւական չի իր ժողովրդին լաւ ծառայելու և նրան օգտակար լինելու. դրա համար հարկաւոր էր որ անցեալը ճանաչելուց յետոյ ներկան էլ լաւ ուսումնասիրուի, իմանայ այդ ժողովրդի այժմեան վիճակը, թէ այժմ ինչպէս է ապրում, ինչ ցաւեր ունի, ինչ կարիք ու պակասութիւն: Ահա այս կէտերն էին մնում Խրիմեանին ուսումնասիրելու, որ կարողանար լիովին իրեն ոյժերը գոհել իրեն սիրած ազգի օգտին, իսկ այդ նպատակին հասնելու ամենալաւ և կարճ ճանապարհը ճանապարհորդութիւնն էր իրեն հայրենի գաւառներում, ուստի և նա հաստատ վճռեց օր առաջ սկսել այդ գործը, թէպէտ դեռ շատ երիտասարդ էր:

Ինչպէս որ բոլոր վանեցոց սովորութիւնն է՝ ընտանիքի հասակաւոր գաւակին, պանդխտութիւն գնալուց առաջ, ամուսնացնել մի աղջկայ վրայ, որ օտարութեան մէջ չմոռանայ իրեն ընտանիքը և դառնայ, այդպէս էլ Խրիմեանի ծնողները ամեն կերպ աշխատեցին նրա «ոտը կապել (այսինքն ամուսնացնել) որ դառնայ» օտարութիւնից. և ահա թէպէտ հակառակ նրա կամքին ու ցանկութեան, բայց վստահ լինելով որդիական հնազանդութեանը, նրան պսակեցին մի աղջիկ ընտանիքի աղջկայ վրայ,*) որից շուտով ունեցաւ մի աղջիկ (Թագուհի): Բայց նախախնամութիւնը այլ կերպ էր վճռել Խրիմեանի

ապագան. նրան վիճակուած չէր ընտանեկան խաղաղ յարկի տակ հանգիստ ու անդորր կեանք վարել. նա միայն մի փոքրիկ ընտանիքի և մի քանի գաւակների հայր չէր լինելու, այլ հայ ժողովրդի բոլոր ընտանիքների և ազգի բոլոր գաւակների հոգատար հայր էր դառնալու: Հազիւ մի քանի տարի միայն մնաց իրեն կողակցի հետ. պանդխտութեան ժամանակ մեռան նրա թէ կիներ և թէ աղջիկը: Թէպէտ ընտանեկան այդ մեծ կորուստը շատ խորը տպաւորութիւն և ցաւ թողեց Խրիմեանի հոգու վերայ, բայց նա շատ շուտով մխիթարուեց այն մտքով, որ այդ կորուստը նրա առաջը բաց արեց մի լայն ու ազատ ասպարէզ, որտեղ այդ մի կորստի տեղ գտնելու էր հաղարաւոր ընտանիքներ և գաւակներ, որոնք ապաստում էին նրա քաղցր հոգատարութեանը:

Երիտասարդ Խրիմեանը իրեն ճանապարհորդութիւնը սկսեց իւր հայրենիքից՝ Վանի շրջակայքից, և ուսումնասիրելով հետզհետէ ընդարձակեց աւելի հեռուն իւր ճանապարհը: Երկու գլխաւոր կենդրոններ գրաւում և քաշում էին երիտասարդ Խրիմեանին գէպի իրենց՝ մէկը Քրիստոսի ման եկած սուրբ տեղերն ու նրա լոյս գերեզմանն էր, իսկ միւսը Լուսաւորչի գահը: Երուսաղէմն ու Էջմիածինն էին նրա գլխաւոր ուխտատեղիները և ահա դուրս գալով իւր հայրենի գաւառից՝ Վասպուրականից, ուղևորուեց գէպի Ռուսաստան՝ Պարսկա-Հայաստանի միջով. այցելեց Պարսկա-Հայաստանի հայաբնակ շատ քաղաքներ ու գիւղեր և հասաւ վերջապէս Էջմիածին, իսկ Էջմիածնից շրջակայ աւերակները, Հայոց հին մայրաքաղաքները և շատ նշանաւոր վանքեր: Բաւական երկար ժամանակ և բաւական ընդարձակ տեղ Էջմիածնի չորս կողմը շրջելով ու ուսումնասիրելով, նորից անցաւ Տաճկաստան, բայց ոչ իւր հայրենի քաղաքը, այլ Տաճկաստանի լուսաւորութեան կենդրոնը՝ Պոլիս: Այս ընդարձակ ճանապարհորդութիւնը մենք շատ հեշտութեամբ նկարագրեցինք, և շատ շուտով անցանք այդ ընդարձակ ճանապարհը, բայց այդքան հեշտութեամբ չի յաջողել

*) Յովհաննէս Սեփեանի դստեր վերայ:

Հայրիկին. մի անփորձ երիտասարդ էր նա, դժուար անցանելի և վտանգաւոր ճանապարհներին անտեղեակ. աւելացնենք սրտ վերայ և նիւթական խեղճ գրութիւնը, որ նա առանց մի ապահով գումարի և շատ անգամ առանց մի կռակի անցել է մի քաղաքից դէպի միւսը և գիւղէ ցփւղ. նրան ոգևորողը իրեն մտադրած նպատակն է եղել, երիտասարդական կրակոտ եռանդն ու աղնիւ զգացմունքները, իսկ ամբողջ ճանապարհի ապահովութիւնը եղել են նրա ուժեղ ծնկները և գիւղական պարզ տրեխները:

Երիտասարդ Խրիմեանին Պօլսի կեանքը գրաւեց. և զբաւեց այդ կեանքի ոչ թէ արտաքին նիւտ ու կացը, ոչ թէ շուայ և փափուկ կողմերը, որ անպակաս է ամեն մի Եւրոպական մեծ քաղաքում, և վերջապէս ո՛վ կ'արժանացնէր այդ փափուկ կեանքին Խրիմեանի պէս մի գաւառացի, օրուան հացի կարօտ երիտասարդին. այլ Պօլսում գրաւեց նրան Եւրոպական լուսաւորութիւնը, բարձր կրթութիւնն և Պօլսի այն ժամանակուայ հայոց կեանքը. մի խօսքով ցանկացողի համար այս մայրաքաղաքումը շատ շատ բան կար, և Խրիմեանը, որպէս մի ուսումնածաւալ երիտասարդ, շատ յարմար գտաւ իրեն ուսման և կրթութեան պակասը լրացնելու համար մնալ այս լուսաւորութեան կենդրոնում առ ժամանակ, որպէս զի հարկաւոր եղած ուսման պաշարը հաւաքի այդ Եւրոպական ընդարձակ քաղաքից: Այս ցանկանում էր աղնիւ երիտասարդը. բայց լինելով պէտք է ձեռք բերէր այդ, քանի որ նա օրական ուտելու կտոր հաց չունէր և դեռ ստիպուած էր քաղցածութեան դէմ կռուելու. սակայն այդ անձանօթ և ընդարձակ քաղաքումը քաղցածութիւնն էլ չվախեցրեց և չլուսահատեցրեց երիտասարդին. նա մի կտոր հացով իրեն քաղցած փորը յագեցնելու համար, ինչպէս պատմում են իրեն ամենամօտ աշակերտները, առժամանակ պարտապէս է կօշկակարութեամբ, կամ աւելի ճիշտն առած, կօշկակարի մօտ ծառայել է՝ իրեն նպատակին հասնելու համար: Կօշկակարութեամբ շատ դժուար

էր բարձրանալ և հռչակ ստանալ, այն էլ Պօլսում և այդ ժամանակի կեանքի մէջ: Այդ ժամանակները արդէն տաճկահայերի վիճակի բարուղման խնդիրը արծարծուել էր Պօլսոյ հայերի մէջ և այնքան էր բազմացել միայն խօսող և ղալմաղալ անող ազգասէրների թիւը, որ հազիւ էին ճանաչում իսկական, անձնուէր և գործի գլուխ կանգնած մարդիկ, իսկ Խրիմեանի պէս մարմնացեալ ազգասիրութիւնը, կօշկակարի ստոր ծառայութեան մէջ, շատ շուտով չէր երևալ և ուշադրութիւն գրաւիլ: Սակայն այս մի բանը կայ, որ արտակարգ տաղանդներին, չնորհալի մարդկանցը ուր կուգէր գցեցէք նրանք չեն կորչիլ, ուշ թէ վաղ կփայլեն, ինչպէս ազամանդը, եթէ հազարաւոր փայլփլող ապակիների մէջ գցես, նա դարձեալ կերևայ և իրեն փայլը ցոյց կ'տայ:

Խրիմեանը կօշկակարի հասարակ ծառայութեան մէջ էլ աննշան և կորած չմնաց. շուտով նա իր արհեստակիցների մէջ ձեռք բերեց ընդհանուր հռչակ, բարի անուն և զբաւեց բոլորի սէրը. հէնց այդ տեղից արդէն երևում էին ապագայ մեծ Հայրիկի ժողովրդականութեան սերմերը: Իր արհեստակիցների մէջ Խրիմեանը, բացի իւր բնական ընդունակութիւններից, մի առաւելութիւն ունէր, որ կրթուած էր և դեռ այժմ էլ ճարած կռակներովը կրթութիւնը շարունակում էր Պօլսումը, ուստի և բացի իրեն արհեստից նա արհեստակիցների մէջ ուսուցչութիւն էլ էր անում, որը կամաց կամաց այնքան ընդարձակեց, որ վերջը Պօլսոյ թաղական ուսումնաբաններից մի փոքրիկում ուսուցիչ եղաւ, ու հաւաքած փողերով վճռեց վերջապէս վաղուց մտքումը դրած ուխտը կատարել: Գնաց դէպի սուրբ երկիրը՝ Երուսաղէմ, շրջեց, համբուրեց, երկրպագեց և արտասուեց այդ սուրբ և քրիստոսակօխ վայրերում. լցուած քրիստոնէական անհուն սիրով ու սուրբ զգացմունքներով, վերադարձաւ նորից լուսաւորութեան կենդրոնը՝ Պօլիս:

Մինչև որ մարդ անուն, դիրք չունենայ ընդհանուրի ա-

ուջ, նրա խօսքը նշանակութիւն և ազդեցութիւն չի ունենում հասարակութեան վերայ, բայց եթէ անուն և հռչակ ունի, նրա ասած սուտն անգամ ընդունում է ամենից ճշմարտի տեղ: Երիտասարդ Խրիմեանը եռանդով լիքը շատ բան էր ուզում անել, շատ բան էր ուզում հասարակութեան հասկացնել և Հայաստանում իւր տեսած ցաւերը պատմել, բայց ով կ'լսէր նրան, մի հասարակ ուսուցիչ էր. դրա համար հարկաւոր էր նախ և առաջ դիրք և անուն ձեռք բերել հասարակութեան առաջ և այնուհետեւ խօսքն անցկացնել: Եւ ահա շուտով Խրիմեանը Պօլսումը երկու մեծ գիրք է հրատարակում. «Հրաւիրակ Արարատեան» և «Հրաւիրակ Երկրին Աւետեաց», որոնցից մէկի մէջ նկարագրում է Եջմիածինը և նրա շրջակայքի սուրբ տեղերը, իսկ միւսի մէջ երգում է սուրբ երկրի՝ Երուսաղէմի նշանաւոր ուխտատեղիները: Այս երկու մեծ գրքերը միանգամից հռչակ տուեցին Խրիմեանին և նրա անունը գրեցին հրապարակի վերայ. ամենքն էլ հետաքրքրւում էին այդ անձնաւորութեամբ, իմանալու թէ ով է այդ ազգասէր հոգին, այդ գեղեցիկ լեզուի տէրը և այդ շնորհալի բանաստեղծը: Նրա անունը աւելի բարձրացաւ բարձր գասակարգի մէջ, հասկացող և ուսումնական գասի առաջ, և հէնց այդ էր հարկաւոր Խրիմեանին, որովհետեւ գրանից յետոյ նա կամաց կամաց կարողացաւ մուտք գործել գիրք ունեցող և պատիւ վայելող մարդկանց աները, ամիրաների պալատները, որոնք ամենքն էլ մեծ բաւականութեամբ լսում էին երիտասարդ ճանապարհորդի հմուտ տեղեկութիւնները բուն Հայաստանից, բուն ժողովրդից. հետաքրքրութեամբ լըսում էին նրա նկարագրած և արտասուած հայաստանցու դրութիւնը և ցաւերը, և վերջապէս զարմանում էին նրա տուած խելօր գատողութիւնների վերայ: Ահա հէնց այս թուականներից (այսինքն 1850—1855) սկսուեցաւ Խրիմեանի փառքը, և այդ օրուանից գրուեց նրա ժողովրդականութեան հիմքը:

Մտտամբ իրեն փափագին հասած լինելով, Խրիմեանը

որոշեց վերադառնալ հայրենիք իւր հայրենի տունը, առ ժամանակ ընտանեկան յարկի տակ խաղաղ և հանգիստ կեանք անցկացնելու, առանց մտածելու, որ հայրենիքում իրեն սպասում են այնպիսի հանգամանքներ, որոնք պիտի նրան գնէին այն ճանապարհի վերայ, որով կամաց կամաց բարձրանալով պիտի հասնէր մի օր Վաթուղիկոսական գահին: Հայրենիք վերադառնալով նա գտաւ իւր կնոջն ու աղջկան մեռած: Ինչպէս ասացինք արդէն, թէպէտ սրտակից հարազատների մահը շատ խորը տպաւորութիւն թողեց նրա վերայ, սակայն միւս կողմից նրա փակ ոտքերը բաց արեց: Նա տեսնելով որ գործելու ամենալաւ և ամենալայն առաքելքը ու ժողովրդի հաւատարմութիւնը գրաւելու, նրա վրայ ազդեցութիւն գործելու միակ առաքելքը հոգեորականութիւնն է, վճռեց հաստատապէս մտնել կուսակրօն հոգեորականութեան մէջ, և ահա 1854 թուին նա ձեռնադրուեց վարդապետ Աղթամարայ վանքում: Այս նոր վարդապետը մինչև այդ օրը եղածներից բոլորից էլ զանազանում էր շատ շատ բաներում. ճշմարիտ է, սա էլ միւսների պէս իրեն սկզբնական կրթութիւնը ստացել էր վանքերում, սակայն գրանով չէր բաւականացել և վանքերից դուրս գալով նա մտել էր ժողովրդի մէջ, ուսումնասիրել էր ժողովրդին, իմացել էր նրա ցաւերը. և հիմա եթէ նա վարդապետ էր դառնում, չէր դառնում մի որեւէ վանքում պարապ, հանգիստ նստելու, այլ որպէս զի այդ կոչումով վանքից դուրս ժողովրդի մէջ կարողանայ գործ չինել. և ճշմարիտ մենք կ'տեսնենք որ նրա կեանքը, վարդապետ դառնալու օրից վանքի մեռած կեանքով չի սահմանափակւում:

Վարդապետ ձեռնադրուեց և դժուար քայլը արդէն կատարուած էր. Հայրիկի գործունէութեան ճանապարհն ու եղա-

Նախը արդէն ինքն ըստ ինքեան որոշուած էր, բայց մնում էր մի որոշ կարգի և սխառմի ենթարկել, մի կանոնաւոր մշակած ծրագրի հետեւ, իսկ այդ ծրագիրը արդէն մտածուած և մշակուած էր նոր վարդապետի գլխում, մնում էր իրագործել: Այդ ծրագրները իրագործելու համար Խրիմեան վարդապետին հարկաւոր էին մի կենդրոն և իշխանութիւն. դեռ ես մի հասարակ վարդապետ էր, ոչ ոք նրան թոյլ չէր տայ ուզածները կատարելու, մանաւանդ իւր կարգակից միաբանների նախանձն ու ատելութիւնը: Այս իսկ նպատակով Խրիմեանը ուղևորուեալ է նորից Պօլիս: Այս անգամը արդէն առաջուայ նման մի անյայտ մարդ չէր գնում Պօլիս. բոլորն էլ գիտէին Խրիմեանին և առանձին սիրով ու սրտովաւանքով էին վերաբերում զէպի նրան և նրա խնդիրները: Շնորհիւ իւր ունեցած անուանը և գիրքին, նա Պատրիարքիցը նշանակուեալ է Վարազայ վանքի (Վան քաղաքին մօտիկ) վանահայր և չուտով ուղևորուեալ է զէպի այդ կենդրոնը գործ սկսելու 1856 թուին: Խրիմեանի կեանքի մէջ Վարազայ վանքի վանահայրութիւնը և գործունէութիւնը մի փառաւոր չրջան է, մարդկային եռանդի և աշխատութեան մի հսկայական յաղթանակ է: Վանահայրութեան պաշտօնով մտաւ Հայրիկը այդ վանքը այն ժամանակ, երբ նա ներկայացնում էր մի անապատ, որի մէջ բուն էին դրել մի քանի անպործ և մեռած հոգևորականներ. բայց Խրիմեանը արդարացրեց ժողովրդական այն սովորական ասացուածքը, թէ աստղով մարդիկ, գործի մարդիկ չոր քարին էլ որ գնան կ'կանաչի. ճշմարիտ որ չանցած մի քանի տարի այդ անապատը Խրիմեանի աշխատութեամբ կանաչեց:

Կարճ ժամանակում այդ մոռացուած, խուլ վանքում բարձրացաւ մի հոյակապ շինութիւն. դա դպրոցն էր, որի մէջ դասերն ու դաստաւութեան եղանակը նորութիւններ էին և այս այն հաստատութիւնն էր, որից պիտի դուրս գային Խրիմեանի ապագայ օգնականները և իրեն նման անձնուէր

հովիւներ: Չանցաւ մի տարի և ահա դպրոցի կողքին գերբնական աներեւոյթ գորութեամբ բուսաւ մի նոր շէնք, որի անունը տպարան էր: Երեսուն, երեսուն հինգ տարի սրանից առաջ աւելի կտպատէինք, որ Վարազայ տարի մերկ ժայռերը կանաչէին և ծաղիկներով ծածկուէին, քան սպատէինք, որ Հայաստանի յետ ընկած մի անկիւնում, լուսաւորութեան բալոր կենդրոններից կտրուած և ամեն յարմարութիւններից զրկուած Վարազայ վանքում մի կանոնաւորուած տպարան հաստատուէր, և այդ տպարանը իւր պէտքերը ասիական քարաւաններով հոգար. բայց այդ անսպասելին իրագործեց Հայրիկը. դա եղելութիւն է:

Գեռ քարաւաններով տառեր ու թուղթ էին կրում, որ Վարազայ տպարանից դուրս թաւ «Արծիւն Վասպուրականին» ողջոյնը բերանին և սրացաւ թևատարած զէպի Հայրենիքի հեռաւոր անկիւնները, զէպի Հայրիկի սիրեցեալ որդիները: Այս ողջունատար Արծիւն Հայրիկի խմբագրութեամբ լոյս տեսնող առաջին լրագիրն էր Հայաստանում «Արծուի Վասպուրական» անունով, որը պէտքէ տարածէր Հայր խմբագրի մրտքերն ու զգացմունքները թմրած, քնած հայ որդիների մէջ: Հայրիկի և նրա լրագրի նպատակը պարզ գործուած էր հէնց լրագրի ճակատին. թևատարած սաւառնում է արծիւն ողջոյնը կտուցին, իսկ Վարազայ բարձրութիւնից լոյս է շաղում զէպի առաջը ձգուող դաշան ու ծովակը:

Այս բոլորը հսկայական գործեր էին, որոնք յատուկ են խելքով ու բնաւորութեամբ հսկայ մարդկանց և արդիւնք են նրանց երկաթի կամքի:

Վարազայ վանքի հռչակը կայծակի արագութեամբ տարածուեց. մի հասարակ մենաստանում կարճ միջոցում հաստատուել էին դպրոց, տպարան և լրագիր, և այդ բոլորի անողը մի հասարակ վարդապետ էր, որի մէջ միայն եռանդն ու զգացմունքները հասարակ չէին: Խմբերով ուխտաւորներ էին դիմում զէպի Վարազայ վանքը, ոչ այնքան վանքին ու

խաշին ուխտ անելու, որքան Հայրիկին և նրա կատարած նոր գործերին: Ուխտաւորը հասնում է Վարազ. դեռ պարխապնե-
րից ներս չմտած վանքի առաջը, դաշտի մէջ պատահում է
մի խումբ գութանաւորների, որոնք արևի տակ քրտնաթոր
հերկում են կոշտ գետինը, փափուկ հաց ճարելու. լծկանե-
րին կառավարում են մի խումբ առողջ, առողջ և ուշաքաղաց
երիտասարդներ, իսկ գութանի մասը բռնում է վիթխարի,
պարթևաց ցեղից, գեղեցիկ դէմքով, քաղցր ու կրակոտ ուշ-
քերով մի պատկառելի մարդ, որի տմեն մի խօսքն ու խրա-
խոյսը սիրտ ու հոգնու է տալիս յոյնած հոտալներին: Ուխ-
տաւորը դանում է հոտալներից մէկին հարցնելով. «Հայրիկը
վանքումն է արդեօք և ժամանակ կ'ունենայ ընդունելու». հո-
տալները բոլորն էլ դառնում են լուռ և պատկառանքով դէպի
հսկայ մաճկալը, իսկ քաղցրահայեաց մաճկալը նայելով ուխ-
տաւորին ժպտում է աղի, և ուխտաւորը այդ մի ժպտից հա-
կանում է ամենայն բան, հասկանում է որ մասը բռնողը Հայ-
րիկն է: Հոտալներից մէկը շատաւում է դէպի վանքը տանելով
հետը ուխտաւորին իրեն վայել տեղն ու պատիւը տալու:

Միջնում է վերջապէս և ահա տուն են դառնում գութա-
նաւորները. տանում է ուխտաւորին մօտը Հայրիկը և մի քանի
ժամուայ քաղցր խօսակցութեամբ անշափ բտականութիւն
պատճառում իւր կարօտ հիւրին: Մութն ու հանգիտոր կո-
խում է աշխարհին, ամենքը քնի հանգիստ գիրկն են մտնում,
միայն այդ ժամանակ վանքի մի անկիւնում տղարանում դեռ
կեանք է եռում: Ուխտաւորը մանում է տղարան տեսնելու
այդ հրաշալի գործը. և ի՞նչ է տեսնում առաջը, ցերեկոտն
յոյնած հոտալները և մաճկալը կարծես նոր ոյժ ու հոգնու
առած շատաւով շարում են լրագրի էջեր: Լուսանում է ա-
ռաւօտը և ուխտաւորը մանում է Հայրիկի դարձըր տես-
նելու. ներս մտածին պէս նրան երևում են դարձեալ նոյն
ժանօթ դէմքերը. երէկուան հոտալներն ու զրաշարները նրա-
սած նստարանների վերայ, իսկ նրանց առաջը կանգնած հրա-

կայ մաճկալն ու զրաշարապետը, պատմում են Հայոց անցեա-
լից, լսում ու մեկնում ու Քիբրը կային: Միևնոյն խումբն էր,
որ իւր ուսերի վերայ տանում էր բոլոր ծանրութիւնը. — Հայ-
րիկն և իւր հասակաւոր աշակերտներն էին, որոնք առաւօտը
ուսանում էին, ճաշից յետոյ վարում, զիշերները շարում:

Անցնում էին տարիներ և Վարազի բոլոր նոր հաստա-
տութիւնները շարունակում էին ապահով, նոյն եռանդով և
այդ բոլորը Խրիմեանի սեպհական քրտնորով և ժողովարարու-
թեամբ. ամենայն կողմից չէին խնայում վտանգօր աշխատու-
թիւնները նուէրներով ապահովել և վարձատրել: Խրիմեանի
աշխատութիւնը Վարազում այնքան էր ծաղկել և նրա դքսած
սերմերը այնքան աճել էին, որ այժմ առանց նրա ներկայու-
թեան, նրա աշակերտները ¹⁾ կարող էին գործը ինքնուրոյն
առաջ տանել: Տէնց այդ էլ ցանկանում էր Հայրիկը, գործը
ուելի ընդարձակելու համար:

Այս ժամանակներն էին, (1861) որ պատրիարքարանի
հրամանով Խրիմեան վարդապետը նշանակուեց Տարսն գաւառի
առաջնորդ և անցաւ Մշոյ ու Կարապետ վանքը, որպէս վա-
նահայր: Վարազայ վանքից ու Կարապետ գետնոյ ուխտա-
ւորը առ ժամանակ խաբւում էր և չէր ուղւում աշքերին հա-
ւատալ. կարծում էր որ Վարազը իրեն բոլոր հաստատու-
թիւններով տեղափոխուել է Մուշ, կարճ և շատ կարճ ժամա-
նակամիջոցում նոյն գողոցը և նոյն լրագրերը երևացին և ու
Կարապետի վանքում. միևնոյն գործը նոյն եռանդով և աջո-
գութեամբ Հայրիկը այստեղ էլ զբուխ բերեց երկու տարւանց
ընթացքում: «Վաստկութեանի արծիւը» իւր ձապը ուղարկեց
Տարսն «Արծուիկ Տարսնոյ» անունով (ոպ նոր լրագրի ա-
նունն էր): Բայց ի հոգնում առ յայժմեան ոչ մի աստղաւոր մի
գործ չէր ընդհատուել:

Սակայն իր բարի գործն է, որ միշտ չար թշնամիներ և
ուսուրդող ճաշակաւի դժուար ոգի սկսեց ի պայքար հրաշման
որով ¹⁾ Նրա աշակերտները մէջ ամենից նշանաւորն եղաւ հանդու-
ցեալ Գարեգին Կալիկոպոս Սրուանձտեանը:

հակառակորդներ չի ունեցել, որ Խրիմեանն ու իւր բարի գործերը չունենային: Աստուծոյ սրբին էլ, որ մարմնացած սէր էր և անհուն ներողամտութիւն գէպի մարդիկ, նա էլ ունեցաւ իրեն չար թշնամիները՝ փարիսեցիք, որոնք այնքան ատեցին արդարութիւնը, իրենց կեղծաւորութեան թշնամի ճշմարտութիւնը, որ խաչեցին անգամ Յիսուսին: Խրիմեանը բազմաթիւ երգրագրուների հետ, իրեն համար թշնամիներ էլ ունեցաւ և այդ թշնամիները իրեն կարգակից ընկերներն էին, մի քանի, մեռելութիւն և անգործունէութիւն սիրող միաբան վարդապետներ, որոնք ամեն կերպ, ներքի թէ աններքի միջոցներով աշխատում էին խափանել նրա սկսած գործը. և ոչ միայն գործն էին ուզում խափանել, այլ աշխատում էին և Խրիմեանի կեանքին վերջ դնել. այդ փորձերը կրկնել են մի քանի անգամ, թէ անձամբ և թէ կաշառուած քուրդ աւազակների ձեռքով, բայց Աստուծոյ պահած զառը զայլը չի կարողացել երբէք ուտել:

Այնպիսի գէպեր են պատահել Խրիմեանի կեանքի մէջ և այնպիսի հրաշքներով է ապատուել նա իրեն թշնամիների ճիրաններից, որ իրաւունք ունէր միշտ կրկնելու իրեն հակառակորդների երեսին թէ «և խորհուրդս, զոր խորհիք, խափանէ ձեզ Տէր, զի Աստուած ընդ մեզ է»: Դատերից մէկը և նշանաւորը պատմեմք: Յուլը ձեռքին մեն միայնակ Վարագի վանահայրը անցնում է դաշտի միջով առանց երկիւղ քաշելու շրջող աւազակներից և արիւնասում քրդերից. ինչ ունէր վախենալու. փող չունէր որ խլէին. ոսկի, արծաթ չունէր որ կողոպտէին. հասարակ հաստ չալից մի զգեստ ունէր հագին, որը, առանց կողոպտելու էլ առաջն եկող առաջին կարօտեալին պատրաստ էր հազցնելու: Նա անցնում է խաղաղ դաշտի միջով անձնատուր իւր մաքերին և նորանոր ծրագրներին, երբ յանկարծ դուրս է գալիս նրա առաջը վարձուած քուրդ աւազակը զինուորուած և մերկացած սուրը ձեռքին. առանց վրդովելու մի խաղաղ և միամիտ հայեացք է ձգում Հայրիկը քրդի

երեսին, և ահա զազան, մարդակեր քուրդը զղջման արտասուքները աչքերին, մի կողմն է ձգում կաշառուած սուրը, ընկնում երեսի վրայ Հայրիկի ստրերը, թռչում է արտասուքներով զարշապարները և ներումն խնդրում, առանց պատմելու թէ ինչ է պատահել առաջ: Բռնում է ձեռքից, բարձրացնում է քրդին և հարցնում է նրա արտասուքների պատճառը. քուրդը պատմում է որ ինքը փող է վերցրել վանքի միաբաններից, որ ճանապարհին սպանէ նրան. իսկ երբ Հայրիկը հարցնում է, «հապա ինչու չսպանեցիր», քուրդը պատասխանում է. «երբ նայեցի խաղաղ, անվրդով դէմքիդ և բարի աչքերիդ, ձեռքերս թուլացան յանկարծ և ոտքերս չզլծայեցին չզլտեմ ովքեր»: Հայրիկը հասկացաւ ամենայն բան. ճանապարհ գցեց քրդին, և քրիստոնէական անշափ ներողամտութեամբ օրհնեց իրեն թրշնամիներին. առ ոչինչ համարելով կատարուած տխուր եղելութիւնը, լուրթեամբ միայն պատասխանեց իրեն հակառակորդներին:

Խրիմեանի վիճակը անտանելի էր ս. Կարապետի վանքում. ինքն առաջնորդ էր, բայց վանքն անգամ չէին ներս թողնում, և նա ստիպուած թափառում էր այս ու այն կողմը: 1868 թուին նա գնաց Եջմիածին և Գէորգ Գ. երջանկալիշատակ Կաթողիկոսի ձեռքով եպիսկոպոս ձեռնադրուեց: Վերադարձաւ նորից Մուշ, բայց այլ ևս անկարելի էր այնտեղ մնալ: Նրա աշակերտները հալածուել և ցրուել էին. նրա հիմնած հաստատութիւնները քանդիկ և ոչնչացրել: Սակայն հէնց այս հալածական օրերում, երբ նրան վանահայրութեան և առաջնորդական պաշտօնով վանքը չէին ներս թողնում, Պոլսում ազգային ժողովը նրա համար պատրիարքական զահի վերայ տեղ էր պատրաստում: Եւ ահա 1869 թուին Ռափորի տփերին, Պոլսի դիմացը, արքայական մի նաւի առաջ,

շտեանում ազգային մի չընդ հանդէս էր կատարում. այդ Խրիմեան Հայրիկի պատուին էր, որը գտլիս էր պատրիարքական գահի վերայ բազմելու:

Պատրիարքական գահը կառավարեց 4 տարի, կուսակցութիւնների ամենամանր ժամանակամիջոցում և երկար ջանքերից յետոյ չկարողանալով գոտարկ և մանր կուսակցութիւնները հաշտեցնել, նա ստիպուեց հրաժարական տալ, այդ պարաններով և յարձակումներով պաշարուած գահին:

Նոյն արտասուքներով և նոյն հառաչանքներով չքածանուեց պատրիարքութիւնից, ինչպէս որ Վասպուրականի արծուի և Տարսնոյ արծուիկի բներից հեռանալիս, և իւր սիրեցեալ աշակերաններին սուրբ աւանդ թողնելիս. նա պատրիարքական գահից հեռացաւ առանց արհեստալու. իրեն այդ իշխանական գահից զրորոյններին օրհնելով հեռացաւ, որովհետեւ ինչպէս ինքն է սակ իւր «Հրաժարական Խօսքի» մէջ, այդ գահերին չի ձգտել, իրեն ու մի քանիսններին գահը ծառայեցընելու, այլ այդ ծանր գօտին կապել է ընդհանուրի օգտին գործելու. սակայն այդ գահը կուսակցութիւնների կուռի սուղարեզ լինելով, իսկ գահակալը խաղաղիւր, չէր կարող Խրիմեանին դրաւել և կաշկանդել. նա սիրում էր ժողովրդին և ուխտել էր զոհ գնալ նրա օգտին, ուստի և ուրախութեամբ վայր իջաւ ամիրանների բազուկներից, իշխանական խախուր բարձրութիւնից, մասն նորէն ժողովրդի մէջ, նրանց սրտերում հաստատելու իւր իշխանութեան գահը: Նա մեծ ուրախութեամբ և ամենայն հնազանդութեամբ կոտարում էր իրեն վայր զլորող հակառակորդ իշխանաւորների ժողովրդին օգտակար հրոմանները: Նա ստեղծութեամբ շլցուեց գէպի այդ թշնամիները: չխռովեց, որովհետեւ նրա համար նշանակութիւն չունէին իշխանութիւնն ու հրամանը, այլ գործն ու օգուտը:

Մնաց Պօլսումը հասարակ քանոյզի պաշտօնով մինչև 1878 նշանաւոր թուականը, երբ կայացաւ Բեռլինի վեհաժողովը, և ամուսնակալ ազգի կողմից ընտրուեց ազգի կարե-

կից Հայրիկը Եւրոպայ երթալու: Հազաւ Հայրիկը նորից իւր ճանապարհորդութեան արեւները, առաւ ձեռքը պանդխտութեան պաւտանը և գնաց մարդասէր Եւրոպայի առաջը Հայի գառը ջաւ երբ պատմելու: Երջեց երկար Եւրոպայի մայրաքաղաքները, տեսաւ մարդասէր պետերին, ազաւեց, պազատեց և վերադարձաւ մասամբ յուսահատ սրտով:

Եւրոպայից վերադառնալուն պէս Հայրիկը նորից արժանացաւ Վարազր տեմեկու և հովուելու, բայց նրա այդ ուրախութիւնը երկար չտեւեց և նա չարժանացաւ հին Վարազր վերածնելու, որովհետեւ Սուլթանի հրամանով Պօլսո կանչուեց 1885 թուին, ընդ միշտ Պօլսումը Սուլթանի հսկողութեան տակը մնալու:


Պօլսին էր շատ լայն թուաց տէրութեան աչքում Խրիմեանի համար. 1891 թուին նրան խնդրեցին Սուլթանի հրամանով, որ Երուսաղէմ ուխտ գնայ, կարօտած կլինի, և այնտեղ միայն ազօթի իրեն սիրած ազգի համար: Սուլթանի հրամանը վերջնական էր, և Հայրիկը վախուեց Երուսաղէմի խուցերից մէկում մինչև հասաւ 1892 նշանաւոր թուականը. այն քաղցր յիշատակներով լի թուականը, երբ այրիացած Եջմիածնոյ սպաղկեաց Քահն հրաւեր կարգաց ընդհանուր Հայութեան, զիմել իրեն սույ քողը պատուելու և հանուր ազգին Քահակալ Տէր ընտրելու: Մայրական քաղցր ձայնը արձագանք գտաւ հայաբնակ ամենահեռուոր անկիւններում. հասաւ 1892 թուի մայիս ամիսը և ահա Մայր Տաճարի նուիրական կամարների տակ ողջոյն տուին հեռու աշխարհներից, աշխարհիս հակառակ ծայրերից ի մի հաւաքուած Հայ եղբայրները: Վաղուց էր, շատ վաղուց, Եջմիածինը չէր զգացել այդպիսի մի ուրախութիւն, որովհետեւ վաղուց նրա հարազատ մայրական գրկում այդպէս չէին համախմբուել իւր ցրուած, հեռացած սրբիները: Այդ ազգային համագումար ընտրութիւնը յիշեցրեց մեզ մեր անցեալ պատմութիւնը, յիշեցրեց Սահակների ու Ներսէսների օրերը, և նրանց, ընտրութեան ազգային հարազատ ձեռ:

Ընդհանուր հօր, ազգի Պետի ընտրութիւնն էր, որ վերցրել էր
ամեն տեսակ զժուարութիւններ հեռու, շատ հեռու բնակուող
Հայի առաջը, գիմելու Էջմիածին: Եւ արդ ի՞նչ էր մնում ա-
նելու մայիսի 5-ին Մայր Տաճարի կաթուղիկէի տակ հաւարուած
հայութեան ներկայացուցիչներին. արդեօք մտածելու և տա-
տանուելու մի կէտ կար, թէ ո՞վ էր ընտրուելու Հայրապետ,
ո՞վ էր բազմելու Լուսաւորչի Փահլին: Ո՞ւմն է պատկանում այդ
զահր.—ընդհանուր հայութեանը. Ուրեմն ո՞վ պէտք է բազմէր
այդ Փահլին.—անշուշտ նա որին սիրում է Հայութիւնը, որը
սիրում է Հային: Եւ ո՞վ է այն միակ նահապետ հոգեորականը
որին սիրում է Հայութիւնը. դա Խրիմեանն է, որին կէս դա-
րուց աւելի մեծ ու փոքր, կին ու մարդ, թրքախօս ու վի-
րախօս Հայ, բարեկամ, և թշնամին անգամ ատելութիւնը
կրծքի մէջ խեղդելով՝ Հայր և Հայրիկ են անուանում:

Ազգը Երուսաղէմի ակամայ ուխտաւորին ընտրեց Էջմի-
ածնայ Փահլի Փահակալ, և Հայրիկը արժանանալով Կաթուղի-
կոսական Փահլին, վարձատրուեց իւր երկարամեայ հայրա-
կան խնամքների համար, իսկ ազգը հասաւ իւր բաղձանքին,
Լուսաւորչին յաջորդ ունենալով մի ժողովրդական, քաջ ու
անձնուէր հովիւ, որից ազգը սպասում է իրա գերագոյն և
նուիրական յոյսերի իրագործումը:

Ահա այն մեծ մարդու կենսագրութիւնը, որի կեանքի
ծայրը սկսւում է մի գիւղական խրճիթից, կաւազործութեան
մէջ, վախճանը պսակւում է Հայրապետական թաղով, իսկ այդ
երկու ծայրերի մէջ փայլում են մի շարք նահատակութիւններ:

Պ. Հովուեանց



Հրատարակիչ «Ժողովրդական Գրադարանի»
Բազրատ Միլիմանեան:

Ժողովրդական Գրագրության Հրատարակչի

Ժողովրդական գրագրության մէջ հրատարակում ենք հետևեալ բովանդակութեան գրքոյկներ՝ կրօնական - բարոյական, առական, վեպեր և պատմական, աշխարհագրական, գիտնական գրքոյկներ:

Մեր կարծիքով մի այսպիսի օգտակար գործ, որոշեալ նպատակով, անկասկած կ'ունենայ իւր համակրողները, որոնց վստահանում ենք գիմել՝ խնդրելով նոցա աջակցութիւնը տարածման համար:

Դիմում ենք առաւել ևս, և խոնարհաբար խնդրում, Սրբազան Առաջնորդներին, առ ժանապարտիս քահանաներին, յարգելի ուսուցչոհներին և ուսուցիչներին և նրանց՝ որոնք աւելի մօտիկ են ժողովրդին, և թէ համակրում են նպատակին, չզրանալ օգնել մեզ տարածելու յիշեալ գրքոյկները ժողովրդի մէջ, որից կախում է ժողովրդական գրագրության ծաղկիլը:

Մեր հրատարակած գրքոյկներն են.

- | | | | | | | |
|--|---|---|---|--------|----|----|
| 1 ՆԵՐՍԷՍ ՄԵԾ (սարսուռած է) | - | - | - | գիմն է | 5 | կ. |
| 2 ԱՐԲԵՅՈՂԻ ՄԱՀԸ (սպառուռած է) | - | - | - | " | 5 | կ. |
| 3 Ս. ԷՋՄԻԱՇԻՆ (սպառուռած է) | - | - | - | " | 5 | կ. |
| 4 ՎԱՐԴԱՆԱՆՔ (սպառուռած է) | - | - | - | " | 5 | կ. |
| 5 ԹԱԳԼՈՍ և ԲԱՐԳՈՒՂԻՄԷՈՍ (պատկերով) | - | - | - | " | 5 | կ. |
| 6 ՀԱՅՐ և ՈՐԴԻ (պատկերով) | - | - | - | " | 5 | կ. |
| 7 ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼՈՒՍԱՌՈՐԻՉ Ս. ԳԳԻԳՈՐ (պատկ.) | - | - | - | " | 8 | կ. |
| 8 ԹԱՄԱՐ (պատկերով) | - | - | - | " | 5 | կ. |
| 9 ԻՆՉՊԷՍ ՊԱՀՊԱՆՈՒՅԼ ԽՕԼՆԵՐԱՅԻՅ | - | - | - | " | 5 | կ. |
| 10 Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց | - | - | - | " | 10 | կ. |

Գրքոյկները գումարով գնողներին նշանաւոր դիջում կըլինի.

Գրքոյկները գնելու համար պէտք է գիմել հրատարակչին հետեւեալ հասցէով՝

Адресъ: Тифлисъ, (Tiflis, Caucas), Садовая улица № 40.

Баграту Муриманіану.

ТИФЛИСЪ

Скоропечатня Мнацаканя Мартirosянца и К°.

МИХАЙЛОВСК. УЛ. ДОМЪ № 81

4611

2013

ՀՀ Ազգային գրադարան



